

# ՀԱՅԻ ՎՐԱՅ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

Ով Աստուած, Հայր Յաիտենական, կը խնդրենք քեզմէ, յանուն Որդւոյդ՝ Յիսուս Քրիստոսի, օրհնելու եւ սրբելու այս հացը բոլոր անոնց հոգիներուն՝ որոնք կը հաղորդուին անկէ. որպէսզի անոնք կարենան ուտել ի յիշատակ քու Որդւոյդ մարմնոյն, եւ վկայել քեզ ով Աստուած, Հայր Յաիտենական, որ անոնք յօժար են իրենց վրայ առնելու քու Որդւոյդ անունը, եւ միշտ յիշելու զինք, եւ պահելու այն պատուիրանները որ Ինք տուած է անոնց, որպէսզի անոնք կարենան իր Հոգին միշտ իրենց հետ ունենալ: Ամէն:

# ՋՈՒՐԻՆ ՎՐԱՅ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

Ով Աստուած, Հայր Յաիտենական, կը խնդրենք քեզմէ յանուն Որդւոյդ Յիսուս Քրիստոսի, օրնելու եւ սրբելու այս ջուրը բոլոր անոնց հոգիներուն՝ որ կը խմեն անկէ, որպէսզի անոնք կարենան ընել զայն ի յիշատակ Որդւոյդ արեան, որ թափուած էր իրենց համար. որ անոնք կարենան վկայել զքեզ, ով Աստուած, Հայր Յաիտենական, որ անոնք միշտ կը յիշեն զինք, որպէսզի անոնք կարենան իր հոգին իրենց հետ ունենալ: Ամէն:

ARMENIAN (WEST)

